«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում « Երևանի թիվ 4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(հունվար-հունիս 2026թ․)

1. **Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿՁԱՊԿ) գնահատում**

*2026թ.-ի հունվար-հունիս ամիսների համար նախատոսված է եղել իրականացնել թվով 171 սովորողի ԿԱՊԿ/ԿՁԱՊԿ գնահատում, սակայն իրականացվել է 189 գնահատում: Կատարված 10% -ից ավել գնահատումների քանակը պայմանավորված է եղել ուսումնական հաստատություններից ստացված գնահատման հայտերով:*

2. **Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում**

*2026 թ.-ի հունվար-հունիս ամիսների համար նախատեսված է եղել իրականացնել 155 ԿՁԱՊԿ սանի (ՆՈՒՀ-ում), 677 ԿԱՊԿ սովորողի (ուսումնական հաստատությունում), 14 ԿԱՊԿ սովորողի(ՄԿՈՒ-ում), մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում: Փաստացի տրամադրվել է 167 ԿՁԱՊԿ սանի (ՆՈՒՀ-ում), 678 ԿԱՊԿ սովորողի(ուսումնական հաստատությունում), 18 ԿԱՊԿ սովորողի(ՄԿՈՒ-ում) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում: ԿԱՊԿ սովորողներից 2-ը մանկավարժահոգեբանական աջակցությության ծառայությունները ստացել են ՏՄԱԿ-ում ծնողի գրավոր դիմումի համաձայն: ՏՄԱԿ-ի սպասարկման տարածքում կան 3 սովորողներ, որոնց մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները կազմակերպվում են տնային ուսուցմամբ:*

3. ***Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ***

*2026 թ.-ի հունվար-հունիս ամիսներին նախատեսված է եղել, նախադպրոցական, ուսումնական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում, իրականացնել թվով 189 վերապատրաստում: Փաստացի իրականացվել է 186 վերապատրաստում:*

4. ***Խորհրդատվություն***

*2026 թ.-ի հունվար-հունիս ամիսներին նախատեսված է եղել իրականացնել թվով 347 խորհրդատվություն նախադպրոցական, ուսումնական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում: Փաստացի իրականացվել է 333 խորհրդատվություն, որին մասնակցել են շուրջ 1271 մասնակից:*

*Խորհրդատվության թեմաներն են՝*

1. ԿԶԱՊԿ / ԿԶԱՊԿ գնահատման ընթացակարգ, գործընթացի ներկայացում,

2. Սովորողի և սանի անհատական թղթապանակ

3. Ձև 4՝ ԱՈՒՊ-ի և ԱՈՒԶՊ-ի գնահատման ձևաթուղթ

4. Կրթության կազմակերպման Մ/Հ աջակցության ծառայությունների տրամադրման կարգ

5. Սովորողի և սանի մասնակցությունը խթանող դասավանդման մեթոդներ

6. Սովորողի ԱՈՒՊ-ով և ԱՈՒԶՊ -ով սահմանված խելամիտ հարմարեցումների ձեռքբերում, ստեղծում, կիրառում

7. ՏՄԱԿ-ուսումնական հաստատություն-ծնող համագործակցություն

8. ԱՈՒՊ / ԱՈՒԶՊ -ի լրացում և նպատակների սահմանում

9.Ուսումնական նյութի հարմարեցում ըստ առարկաների

10. Դասի պլանավորում հիմնվելով ԱՈՒՊ-ում սահմանված նպատակների վրա

11. Սովորողի և սանի ուսումնառության բարձրացում և առկա դժվարություններ

12. Ապահով և անվտանգ կրթական միջավայր

13. Առկա դժվարությունների հաղթահարում ընտանիքի ներգրավման միջոցով

14. Կրթության առանձնահատուկ կարիք ունեցող սովորողների գնահատման մեթոդաբանություն

15. Հոգեբանի աշխատանքային փաթեթի, իրականացված աշխատանքների և հետագա համագործակցություն

•

## 5.Մշտադիտարկում

2026 թ.-ի հունվար-հունիս ամիսներին նախատեսված է եղել իրականացնել թվով 132 մշտադիտարկում՝ նախադպրոցական, ուսումնական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում: Փաստացի իրականացվել է 135 մշտադիտարկում:

| | |
|---|---|
| Կենտրոնի անվանումը՝ | «Երևանի թիվ 4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ |

Տնօրենի՝ ժամանակավոր պաշտոնակատար՝

(ստորագրություն)

Իրինա Յաղուդյան

(անուն, ազգանուն)

Կ.Տ.

« 01» «07» 2026թ.